ՆՈՐ-ԴԱՐ

№ 169 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 8 Հոկտեմբերի **1885** Երեքշաբթի 8 Հոկտեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 169

Տարեկան 10 բուբլի. վեց ամիսը՝ 6 բուբլի. կես քամիսը՝ 3 բ.50 կ.
Հատը՝ 5 կոպեկ։
Ձախողված կամ թերի համարները խմբագրատան մեջ։

Խմբագրութիւնն հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ՝ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամանակ։
Յայտարարութիւնների բաժին 2 կ., ընկալեալների համար՝ կէսնապարիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Ազգ. ժողովի գռնփակ նիստը։
Քրոնիկոն.—Լուրեր։ Այլ տեսակ մարդասպանութիւն։
Քաղաքական. — Թրքական զօրաժողովի ներկայ կազմակերպութիւնը։ Լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Յայտարարութիւններ։
Բանասիրական. — ,,Գաղտնիք Ղարաբաղի“։

Թիֆլիս, 7 Հոկտեմբերի 1885 Թ.

ԱԶԳ. ԺՈՂՈՎԻ ԴՌՆՓԱԿ ՆԻՍՏԸ։

Հոկտեմբերի 5-ին շաբաթ օրուայ համարի Քրոնիկոնի բաժնում մենք յանուցել էինք, որ Պօլսից լուր կամ տեղեկութիւն ստացած չէր լինելով (ուրբաթ 4-ին Հոկտ.) դեռ չէ գիտենք թէ սեպտ. 20-ին Ազգ. ժողովի նիստը կայացաւ և թէ ինչ հետևանք ունեցաւ։ Հետևեալ օրը, շաբաթ առաւօտ ստացանք մենք Պօլսից մի քանի թղթակցութիւններ և հարկաւոր մանրամասնութեանց տեղեկութիւններ։ Կաշխատենք առաջիկայում հրատարակել այդ թղթակցութիւնները։

Սեպտ. 20-ին նշանակած Ազգային ժողովի նիստը կայացել է ամեն. Պատրիարքի նախագահութեամբ։ Ատենադպիրը կարդացել է կաթողիկոսական ընտրութեան մասին Խառն ժողովի բանաձևը, Էջմիածնի Սինօդի օգոստ. 24-ի հեռագիրը և կաթողիկոս նշանակուելու մասին Էջմիածնից եկած պաշտօնագիրը։ Յետոյ ժողովի ատենապետը յայտարարում է ժողովին, թէ չեն սպասել, որ կաթողիկոսական ընտրութիւնը այս վախճանը ունենայ, բայց այդ մի անակնունելի իրողութիւն է, որի վերայ հրաւիրվում է Ազգ. ժողովի առանձին ուշադրութիւնը։ Պէտք է իւրաքանչիւր երեսփոխան, ասում է ատենապետը, ի նկատի ունենայ ազգի խաղաղութիւնը և եկեղեցւոյ միութիւնը։

Յուսկ յետոյ ատենադպիրը գրաւոր մի առաջարկ է կարդում, խնդրի յոյժ կարևորութեան վերայ շեշտելով, առաջարկում է մի յանձնաժողով կազմել, որպէս զի այս վերջինս տասն և հինգ օրուայ ընթացքում փափուկ և ծանրակշիռ խնդիրը ուսումնասիրէ և այդպիսով Ազգային ժողովի գործը դիւրացնէ, որը կոչուած է ազգի համար ամենածանր խընդրում իւր վճիռը գնելու։

Այդ մասին թեր և դէմ վիճաբանուած չեն Ռուսաց կառավարութեան կողմից Ղարաբաղի հոգևոր և ժողովրդային խնդիրների և մինչդեռ ուժաթափ եղած է Ադուանից կաթողիկոսութիւնն յեպիսկոպոսութիւն խոնարհելով, դիւրին է յափշտակել ոչ միայն Ղարաբաղի մելիքապատկան և վանքապատկան հողերը, այլ և հայ և մահմեդամայն մահմեդական ժողովուրդը, որոնք պատկանում են հարատած մելիքութեան։

Ա. Ղարաբաղի բոլոր հողերը և ժողովուրդը, չենթալով թալաններով բաժանուել է մի քանի անձանց վերայ որք ապագայում թէ և թիկունք կը լինեն խանութեան գոյութիւնը պահպանելով։

Բ. Այդ կալուածաթղթերը վաւերացնելու է Իրքահիմ և Մէհդիղուլի խաների ինքներով և թալանները կըրող անձանց յատկացնելու է „Աղա“ կամ „Բէկ“ տիտղոսները։

Գ. Թալանները գրելու է հին թղթերի վերայ և Թուականները յարմարեցնելու է Իրքահիմ-Խանի կենդանութեան զանազան տարեթուերին, որպէս զի չենթալ լինելն աննկատելի մընայ ռուս պաշտօնակալաց կողմից։ Նոյնպէս և Մէհդի-Ղուլի-Խանի օրով չինուիլքները։

Դ. Եթէ այս գաղտնիքն կը յայտնուի, գրանց դրամով շահելու է մեր սկզբանց վերայ անխախտ մնալու պայմանաւ»։

Այս որոշումները խիստ յարմարագոյն երևցաւ Խորհուրդականաց և ինձ, որով ոչ հողերից զրկուում էին հայոց վանքերն և մելիքները, այլ և ես և իմ հաւատարիմներն տէր էինք լինում գրեթէ ամբողջ Ղարաբաղին, մինչդեռ առաջ ոչինչ չունէինք պատկանական և հայրենական։

Նուէրներ են լինում, որը խիստ անհանգստացնում են պատրիարքին։ Այս վերջինս առաջարկում է որ խնդիրը իսկոյն վճռուի, որովհետև Թիւրքիայի և Ռուսիայի շահերը պահանջում են, որ կատարուած իրողութիւնը ընդունուի։ Բաւականին տաք վիճաբանութիւնից և Խորէն-Նարպէյի պատճառած մի միջնադէպից յետոյ, ժողովը քուէարկութեամբ մերժում է պատրիարքի առաջարկութիւնը և ընդունում է Թուրքէն էֆ. առաջարկը, որ է գործը յանձնել դեռ մի յանձնաժողովի քննութեան։

Այսպէս կաթողիկոսական ընտրութեան ընդունելու խնդիրը Ազգ. ժողովը յետաձգեց և ընտրեց մի յանձնաժողով, որի մէկ ծայրում Խորէն-Նարպէյ սրբազանն և Սվաճեան են կանգնած, իսկ միւս ծայրում՝ Մատթէոս սրբազան Իզմիրլեան, Մարկոս Աղաբէգեան, Ս. Փափազեան։

Յոյս կայ, որ Ազգ. ժողովը իւր եկեղեցին և իւր ազգը սիրելով կը գործէ յօգուտ Եկեղեցւոյ և Ազգի։

Ս. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ

—

Հետազօտելով գիւղացիների դրութիւնը Դանձակի նահանգում ես զարմացմամբ լսանում էի՝ որ ոչ մի տեղ այնքան շատ չեն բէկերը և բէկական հողատիրութիւնը՝ որքան Ջուանշիրու և Նուշու գաւառներում։ Նամանաւանդ այդ անսպասելի էր, որ ոչ մի տեղ խանութիւնը այնքան խանուտ և նորաբոզրոջ չէ, որքան Ղարաբաղում, ուր՝ ի հնուց արդէն քաղաքական իշխանութիւնը եղել է հայ մելիքների ձեռքն։ Այս խնդիրը բաւականին լաւ պարզվում է „Դաղտնիք Ղարաբաղի“ գրքի մէջ, որից մի կտորը այստեղ առաջ ենք բերում։

—

ՌՄՀԶ. (1822) Թուին Երևանից Մէհտի-Ջրու-խանն Աբաս-Միրզային գըրում էր յետևեալ երկար նամակը, որը արժան դատեցի նոյնութեամբ ընդօրինակել այս տեղ։ „Ըստ Ձեր բարձր հրամանին հարկէր Ղարաբաղի հոգևորը գաբձնել իմ խանութեան վերայ։ Բայց այս ամենավտանգաւոր և ամենադժուար գործը ի գլուխ հանելու համար, կարևոր էր մի հաւաքական ոյժ և ընկերութիւն, Այս պատճառաւ ես կազմեցի մի գաղտնի խորհուրդ, ուր ներկայ էին իմ գաղտնապահ և համախորհուրդ Ջալար-Ղուլի-աղան, հօրս գրագիր Միրզա-Ադի-կեօզալն, իմ գրագիր Միրզա-Ջամալն, կապիտան-Առստամբէկն և Խանլար-աղան։ Խորհուրդն հակեց հետևեալ եզրակացութեան. „Մինչդեռ տկարացած է հայ մելիքութեան ոյժն Դ. Մելիք Աբոլի և Մելիք Ջևանշուտի մահուամբ. մինչդեռ մեռած է չար Շէյխեան-Թիւնին, որից ոչինչ գաղտնի չէր մնում, մինչդեռ տակաւին ուշադրութեան առնուած չեն Ռուսաց կառավարութեան կողմից Ղարաբաղի հոգևոր և ժողովրդային խնդիրներն և մինչդեռ ուժաթափ եղած է Ադուանից կաթողիկոսութիւնն յեպիսկոպոսութիւն խոնարհելով, դիւրին է յափշտակել ոչ միայն Ղարաբաղի մելիքապատկան և վանքապատկան հողերը, այլ և հայ և մահմեդամայն մահմեդական ժողովուրդը, որոնք պատկանում են հարատած մելիքութեան։

Ա. Ղարաբաղի բոլոր հողերը և ժողովուրդը, չենթալ թալաններով բաժանուել է մի քանի անձանց վերայ որք ապագայում թէ և թիկունք կը լինեն խանութեան գոյութիւնը պահպանելով։

Բ. Այդ կալուածաթղթերը վաւերացնելու է Իրքահիմ և Մէհդիղուլի խաների ինքներով և թալանները կըրող անձանց յատկացնելու է „Աղա“ կամ „Բէկ“ տիտղոսները։

Գ. Թալանները գրելու է հին թղթերի վերայ և Թուականները յարմարեցնելու է Իրքահիմ-Խանի կենդանութեան զանազան տարեթուերին, որպէս զի չենթալ լինելն աննկատելի մընայ ռուս պաշտօնակալաց կողմից։ Նոյնպէս և Մէհդի-Ղուլի-Խանի օրով չինուիլքները։

Դ. Եթէ այս գաղտնիքն կը յայտնուի, գրանց դրամով շահելու է մեր սկզբանց վերայ անխախտ մնալու պայմանաւ»։

Այս որոշումները խիստ յարմարագոյն երևցաւ Խորհուրդականաց և ինձ, որով ոչ հողերից զրկուում էին հայոց վանքերն և մելիքները, այլ և ես և իմ հաւատարիմներն տէր էինք լինում գրեթէ ամբողջ Ղարաբաղին, մինչդեռ առաջ ոչինչ չունէինք պատկանական և հայրենական։

Խորհուրդն, հօրս կնքով վաւերացեալ չինուու թղթերով, հողերն և գիւղերն ընտիր մասերը հաստատեց իմ Ջալար-Ղուլի աղայն, Միրզա-Ասլ կեօզալն, կապիտան-Առստամ-բէկին, Միրզա-Ջամալն և Խանլար-աղայն վերայ, իսկ մնացեալ մասերը հաստատեց հօրս և իմ հաւատարիմ նպաստներն, վեհայների զալեանչիների, քոչերն, ազգականների, դահեկանների, պարտիզպաններն, ջորեպաններն, ձիապաններն, օրմահիւսներն, և այլն և այլն վերայ և պատուիրեց այնուհետև մէկզմէկ կոչել «աղա» և „բէկ“։

Շատ չանցած գաղտնիքներն սկսան վոքր առ վոքր հրևան գալ. մելիքներն և Բաղդասար խալիֆան սաստիկ բողոքեցին գեներալ Ցարմալովին և կնեազ Մադաթովին։ Այս հրդէհի առաջքն առնելու համար վուլթով հրաւիրեցի իմ մօտ Բաղդասար խալիֆային և մի Թալղայի *) տուի նմա հակառակ Խանլար—Աղային տուած չինուու Թալղային, ջրաղացաքարի հանքը կրկին Դանձասարի սեփհականութիւն դարձնելու պայմանաւ։ Վերջին Թալղայովս անգամ ես տէր էի լինում ջրաղացաքարի հանքին, բայց միամիտ խալիֆան չը նկատեց այս կէտը։

Թիֆլիս գնացի հրաւիրմամբ Ցարմալովի, որն Մադաթովի ներկայութեամբ ինձ յայտնեց որ ես քաղաքական յանցաւոր էի պարսիկները քանիցս գաղտ հրաւիրելով և անուղղակի նրանց արշաւանքներին ծածուկ օգնելով. ես քաղաքական յանցաւոր էի յանդգնարար կեղծ Թալղաններ նենգելով, Ղարաբաղի վանքապատկան և մելիքապատկան հողերը և գիւղերը ուզածիս պէս ծածուկ բաժանելով, մինչդեռ առաջ ես ոչինչ չունէի իրրև հօրինական ժառանգութիւն բացի Աղդամ գիւղից։ Վերջապէս Ցարմալովն խօսքը եզրափակելով ասաց, «Եւ որովհետև այս բոլոր յանցանքներն անհերքելի վաստերով հաստատուած են քեզ վերայ,, ուրիշ ոչինչ միջոցով չես կարող ազատուել պատժից, եթէ ոչ միայն ձեռք քաշելով քո խանութիւնից և հեռանալ Ղարաբաղից. քանզի դու քրիստոնեական և միանգամայն քաղաքական յանցաւոր ես»։

Այս վճիռն սոսկալի էր, երբ վերադարձայ Շուշի, դիմեցի կնեազ-Մադաթովին և առանձին Թախանձանօք խնդրեցի սրանից, որ, Վարանդի իւր հաւանած գիւղերից տասնուհինգը հանդերձ ժողովրդով, ինձանից նուէր ընդունի և մի որ և իցէ հնարքով վերակենդանացնի իմ մահամերձ խանութիւնը և աղարտուած պատիւը։ Բայց միամիտ խալիֆան չը նկատեց այս կէտը։

*) „Պատուելի պօլկովնիկ-Խանլար-աղա դրկի բազում ողջոյնի յայտ լեցի քեզ զի գնդապետ Ցարմալովին հանքն Առջամորոյ յանձնեցաք Բաղդասար-խալիֆային, զի նշխեսցէ դմա. վասն որոյ ի հասանել գրոյս, գործ ինչ ոչ ունիջիք ընդ հանքսդ, այլ Թողջիք զայն Խալիֆային-Բաղդասարայ, զի ըստանայցէ զարդիւնս գոյա ի ձեռն գործավարաց իւրոյ։ Մէհդի-ղուլի-խան 1225 տաճկաց Թուականին“։ (Թարգմանած է Շուշու առաջնորդարանի մէջ եղած բնագրին)։

են։ Միւս ընկերները վիրաւորուածին մի կերպ մահից ազատելով, գոռալով ու ճչալով քաղաք են հասնում և ոստիկանութեան յայտնում։ Պատառապետը լսանալով, որ երեն ստորին ծառայողները յարձակումն են գործել, իսկոյն հրամայում է անմիջապէս ձերբակալել յանցաւորներին և գործը քննիչին յանձնել։

Թէև այդ հայերի շնորհքով մի երկու օր հացի գինը ցածացաւ, բայց երբ բոլորը ծախուեց, կրկին բարձրացաւ։ Այսպիսի դէպքեր Թէլաւում շատ են պատահում։ Օգոստոս ամսին մի քանի բաքոսին երկրպագող անձինք, գնուելացած, քաղաքիս ոստիկանի հետ մեծ կռիւ են բացանում հրապարակում, երբ այս վերջինը թոյլչէ տուել գուռնայով քաղաքի միջով ման գալ։ Սեպտեմբերի 14-ին տեղւոյս հայ քննիչը գնում է Ալլահվերդի կոչուած ուխտատեղին և ըմբռնմարտութեանը նայելիս, մի իշխան մըտրակում է նրան ասելով, որ ես այս ինչ իշխանի (որին մարդասպանութեան համար նոյն քննիչը բանտարկել էր) քրոջ որդին եմ։ Դողութիւնը, աւազակութիւնը պակաս չէ ինչպէս Թէլաւում, այնպէս էլ և շրջակայ գիւղերում։ Մօտ օրերումս մի գիւղացի են սպանում գողութեան նպատակով։ Պատմում են, որ տեղւոյս հաշտարար դատարանում դօկումենտներ և թղթեր են կորչում։ Առևտուրը շատ ընկած է և գինին առատ, միայն մի քանի գիւղեր կարկտուեցան։ Եկեղեցիները զուրկ են տիեզերական։

TICO harma- ՏԵՐ ...onorr- ...ան. ...ին։ ...ան- ...ին- ...ան- ...ան- ...ան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ.

Նիստը տևեց ժամը տասից մինչև կեսօր։

Ներկա էին՝ նախագահ Ս. Ազնիվյանցը, անդամներ՝ Ա. Ալիխանյանցը, Ա. Ալամդարյանցը,

րածը չի Թողում մի հիւղէ անգամ չոքի տակից դուրս գնայ, այլ պիտի հիւանդը բերանով է Թէ քթով ողջ ծուխը կուլ տայ, Թէև նուագում է Թըշուառականը, Ճգնում է չորը հեռացնել, չեն Թողում.

Այդ գործողութիւնը աւարտելէն յետոյ, իւր յատուկ Թասը ջրով լիք դընում է առաջ և հարցնում Գէորգին. ինչ ես տեսնում մէջը.—Ոչինչ.—ինչ կայ մէջը, գիտում է մօլլէն իւր օգնականին—կնիկ է—որ նոսկոյն քաջքերը տեսնում է։—Թասի մէջ երկու զաչաղ կայ, մարակները ձեռներին, ասում է ֆուրէջ կինը։ Թրաքով, Գէորգի մէջքին դիպաւ մօլլի Ճիպոտը.—քաչքոտ անպիտան, ինչու ստա ես ասում, երբ Թասի մէջ լիքն են։ Բոլորը սարսափում են։ Մօլլէն պիտի 80 րուբլ վող ստանայ, եթէ առողջացնէ։ Նորից ըսկսում է Թասին նայել,—ոչինչ չը կայ պատասխանում է Գէորգը. ելի, տրաք. գլխին, Ճակատին, Խեղճը ցափից ընդդիմանում է, վրայ է ընկնում անգլուխ մօլլայի Ճիպոտն առնի, որ էլ չը խլի. իսկոյն հրամայվում է Թոկով Թևերը կապել. անխելք ազգականները ուշք չեն դարձնում Գէորգի աղաչանք, պաղատանքին, կապկպում են։ Բարկացած է խօսում, ստում են գիժ է, հանգիստ, խելօք է խօսում, ստում են, սատանէն է այդպէս խօսեցնում։

Ի վերջոյ չղԹայել է հրամայում մօլլէն և սիւնից կապում։ Այդտեղ խեղճը անՃարուԹիւնից լաց է լինում, տեսնելով ծնողների անխելքուԹիւն, բարեկամաց տխմարուԹիւնը և կախարդ մօլլայի անգլուխիւնը։

Այդ դրուԹեան մէջ կանչում է. ախ վարժապետ, ուր ես, արի օգնիր ինձ։ Մօլլէն հարցնում է Թէ ոմն է կանչում. պատուիրում է ամենևին մօտ չը Թողնել վարժապետին, Թէ չէ էլի խարար կանէ. յիրաւի, ես քանիցս փորձեցի գնալ այցելուԹիւն, Գէորգի նախասաղարուած մայրը ինձ չը Թողեց։ Հետևեալ օրը Թևից արիւն է առնում, մինչև Թուլանում, նուազում է. ասյա ԹըզԹեր է գրոտում, հրամայում որը այրել, որը ջուր անել խմացնել, որը վրէն կարել. իսկ Գէորգին այնքան քաղցած պահեց 5—6 օր, մինչև խեղճը սկսեց դել տալ (զառանցել) անգլուխիւնից։ Մօլլան 80 րուբլ ստացաւ սուտ պատուէրներ տուեց և գընաց։ 24—25 տարեկան աղան ահից վախենում էր, Թէ ծնողների մօտ համարձակ խօսէ. Գէորգը այդ օրից տըխուր է. նրա կարծիքով—իւր ոսկի անունը կտրած է, ուրեմն նա մեռածների Թուումն է. ուզում էր տանից հեռանայ, մի գործի կպչէ. չը Թողին տանեցիք, նրան ուժով նշնեցին։ Այդ պայմանը ընդունեց, եթէ Թողնէին գնաց աշխատանք անելու, այդ պատճառաւ խօսք ու ղրոյց տեղն ունեցաւ որդու և ծնողաց մէջ. ծնողքը գտնէալ յայտարարեցին մեր որդին կրկին գժուել է, պէտք է մօլլա բերենք։ Այդ լսելով երիտասարդը նորից ամօթից բարկացաւ, բայց հասկացնել չը կարողացաւ, որ ինքը առողջ է։ Շատերս հոր համոզեցինք չեղաւ. իմ օրհնս ուզում է հեռանալ ինձանից, բայց նրա տանողները քաջքերն են, որ նորից լցուել են նրա սրտի մէջ։ Դէս գանգատ դէն գանգատ մինչև գործը գատաւորեանին հասաւ։ Իսկ նախապաշարուած, տխմար հայրը մօլլան բերել տուեց։ Նորից նոյն գործողուԹիւնները արեց. քահանաներից մէկին ներկայուԹեամբ չը ծեծեց միայն. որպէս զի գալը զուր չանցնէր և հայրն էլ չը մեղադրուէր հասարակուԹիւնից, մօլլան առարկեց, որ երեքից աւելի քաջք չը կային Գէորգի մէջ, այն էլ բռնեցի կրակը ձգեցի... խեղճ երիտասարդը հիմա մտադրուել է նշանը յետ տալ, որովհետև խեղճ հարսնացուին այնպէս երկիւղ է ազդել Գէորգի մասին տարածուած սուտ լուրերը, որ սիրտը կտրուել է, Գէորգը, որքան խելօք է խօսում, գարձեալ գիժ են կարծում, այդ րոպէներին մի խոր ակ է քաշում և գլուխն առնում ընկերուԹիւնից հեռանում մտմտալով.—ախ տխմար հայը ու մայը, ինչու ոսկի անունս կոտրեցիք. լաւ չէը որ ինձ սատ սաղ Թաղէիք....

***

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ՋՕՐԱԽՄԲԻ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ։

1880 Թուականի Ապրիլ ամսում սուլԹանը հրամայեց ձեռք զարկել կազմակերպելու Թրքական զօրախումբը։ Ջը նայելով զանազան արգելուքների հանգամանքների, որոնք խոչընդոտ էին իրագործելու պետական այս կարևոր գործը, ինչպէս օրինակի համար պատերազմական պատրաստուԹիւնը Յունաստանի դէմ, Ալբանիայի ապստամբուԹիւնը և վերջապէս զօրքերի ուղարկելը Տրիպոլիս, պատերազմական մինիստրուԹիւնը (սերասկեր) մեծ ջանք գործ դրեց մինչև 1882 Թուի սկզբները վերջացնել զօրախմբի կազմակերպուԹիւնը։ Բայց ինչպէս արևելեան ազգերի յատկուԹիւնն է եռանդով ըսկըսած գործին հետևում է դանդաղ և Թոյլ վերջաւորուԹիւն։ Այն ժամանակ վՃռեցին օգուտ քաղել օտարի ոյժից և դիմեցին պրուսաց պինուրական մինիստրուԹեան, խնդրելով ուղարկել Թրքական զօրաց մէջ ընդունակ սպաներ։ Պրուսիայից ուղարկուեցան Թիւրքիա մի քանի սպաներ։ Նրանք մեծ եռանդով ստանձնեցին իրենց յանձնած գործաւոր պաշտօնը, որի վերաբերեալ կարգ է ստացան վաշայ տիտղոսները, առատ չքանշանները և ռոճիկ։ Մէկը սկսեց կազմակերպելու շաբէ, միւսը կանոնաւորել պինուրական կանոնագրուԹիւնը, իսկ երրորդը ուշք դարձրեց կարգի դնելու զէնքերը։ Ջը նայելով, որ Թրքական հին կուսակցուԹեան պարագլուխն Օսման-փաշան ամեն ջանք գործ դրեց խանգարելու պրուսական սպաների ձեռնարկուԹիւնը, սակայն վերջիններս իրագործեցին և ի կատար ածեցին զօրախմբի կազմակերպուԹիւնը։ Թրքաց պատերազմական ոյժը բաժանվում է երեք մասի այն է զաշտային զօրախումբ, տեղական զօրք և քաղաքային պահնորդներ։ Դաշտային զօրախումբը բաժանվում է եօթ պինուրական նահանգների։ Այդ եօթ պինուրական նահանգներից (բացի Արաբիայից) ամեն մինը պատրաստը է ներկայացնել (եԹէ լինի պատերազմ) երեք դիւիզիա (զօրաբաժին)։ Ուրեմն զաշտային ամբողջ զօրախումբը, պատերազմի ժամանակ գոյանում է 18 դիւիզիա։ Ամեն մի պինուրական նահանգի երեք դիւիզիաները բաժանուած են հետևեալ կերպով. առաջինում գտնվում են 20—25 տարեկան երիտասարդները, որոնք կոչվում են Նիզամ, երկրորդը բաղկանում է բէշիքթաշից երկրորդ կարգի (լանդվեր), երրորդը՝ երկրորդ կարգի բէշիքթաշից (լանդշտուրմ)։ Վերջ դիւիզիաներից ամեն մինը ունի 26,000 հետևակ, 6,000 հեծելազօր և 90 ԹնդանօԹ։ Ուրեմն Նիզամի Թիւը մօտաւորապէս հասնում է մինչև 200,000 հոգու և 540 ԹնդանօԹի։ Բէշիքթաշ տասն և երկու կօրպուսի I և II դասակարգի զօրաց Թիւը հասնում է մինչև 364,000 և 864 ԹնդանօԹ։ Եւ այդպէս դաշտային զօրախմբի ամբողջ քանակուԹիւն է 562,000 հոգի և 1,400 ԹնդանօԹ։ Տեղական զօրքը ժողովում են 7-րդ նահանգից (Արաբիայից) որոնց Թիւն է 200,000 հոգի։ Վերջապէս քաղաքային պահնորդները ընտրվում են հասակն առած և ֆիզիկական պակասուԹիւններ ունեցող անձինքներից։ Պահնորդների Թիւը 340,000։ Ուրեմն Թիւրքիան իւր նեղ և գժուար միջոցը, որոնք նրա գոյուԹեանը կարող է լինչպէս մի եւրոպական պետուԹիւն դէմ դնել Թշնամու դէմ մօտ 1,000,000 հոգի։ Եւրոպական Թիւրքիայում կայ միայն 3 դիւիզիա Նիզամների, այն է Կ. Պօլսում, Ադրիանապօլսում և Մօնաստիրում։ Այդ ոյժը Թիւրքիան կարող է դէմ դնել Բալկանեան Թերակղզու ամեն մի տէրուԹեան դէմ։

(«St. P. Zeitung»)

—

Սիմլայից հեռագրում են „Times“ լրագրին, որ Հերատի ամրացնելու աշխատուԹիւնները մայիսը Դօլդիչի հսկողուԹեան ներքոյ եռանդագին չարունակվում են։ Իմիրը խըստիւ հրամայել է Կանդահարեան վարչուԹիւններին անյապաղ ուղարկել Հերատ հարկաւոր ռազմական գործիքներ.

Կայերօից հեռագրում են անգլիական լրագիրներին, որ սեպտեմբերի 23-ին Ռաս-Ալուլի առաջնորդուԹեամբ հարեշտանցիք ջարդեցին արաբներին Կերքիտի տակ, Ամադաբի մօտ։ Օսման-Դիգմայի մահուան լուրը հաստատվում է.

—

„Times“ լրագրի Թղթակիցը մի երկար խօսակցուԹիւն է ունեցել բոլգարական մինիստր Կարավելովի հետ, որը, ի միջի այլոց, ասաց, որ „բոլգարները, որոնց ձգտումները միաւորուԹեան (унія) սահմանից դէնը չի անցնում, ցանկանում են օտար ազդեցուԹիւնից ազատ, խաղաղ ապագային կեանք վայելել։ Նրանք չեն ձգտում քաղաքական անկախուԹեան, այլ աւելի ցանկանում են իրենց նախկին յարաբերուԹիւնները պահպանել դէպի Բ. Դուռը։ Նրանք մտադիր չեն չարժում յարուցանել Մակեդոնիայում, որտեղ „Status quo-ի պահպանուԹիւնը վերին աստիճանի ցանկալի է։ ՆեՊադրուԹիւն կը եկող գարնանը իրագործել յեղափոխուԹիւնը, բայց Ռուսիայի վարմունքը Իշխան Ալէքսանդրի վերաբերմամբ արագացրեց անցքերը“. Իշխան Ալէքսանդրը, որին նոյնպէս տեսել է Թղթակիցը, անգլիական մամուլին չնորհակալուԹիւն յայտնեց նրա համակրական յարաբերուԹեան համար դէպի յեղափոխուԹիւնը, որը ժողովրդական չարժումի հետևանք է։

—

Մադրիդի լրագիրների ասուԹեամբ, պապը կը վՃռէ միայն այն հարցը, որը վերաբերում է Սալամնիայի Կարօլինեան կղզիների վերայ ունեցած բարձրագոյն իրաւունքներին։ Մնացած երկրորդական հարցերը կը վՃռեն Բեռլինի և Մադրիդի մէջ կայացած բանակցուԹիւնները։

—

„Politich. Corresp.“ լրագրի ասուԹեամբ, իշխան Ալէքսանդրը իւր սեփական ձեռքով նամակներ է ուղարկել Ռուսիոյ և Աւստրա-Ունգարիոյ կայսերներին, որոնց մէջ յայտնում է իւր դարմանք և ցաւակցուԹիւնը Արևելեան բումիլիայում պատահած դէպքերի մասին։ Նա ասում է, որ իւր բացակայուԹեան ժամանակ Պելչէն և Ֆրանցիսքադ բոլորովին չի ենԹադրել, Թէ ինչ պատրաստուԹիւններ են տեսնվում Փիլիպպօպօլում։

—

Նոյն լրագրին գրում են Փիլիպպօպօլից, որ սեպտեմբերի 22 եկաւ այնտեղ Սօֆիայի անգլիական դիպլօմատիկական ներկայացուցիչը և Իշխան Ալէքսանդրի հետ երկար բանակցուԹիւն ունեցաւ։ Այստեղ սպասում են նաև Սօֆիայի դիպլօմատիկական ժողովի միւս անդամների գալստեանը։ Ինչպէս Բումիլիայում, նոյնպէս և բուլղարիայում Թագաւորում է կատարեալ հանգստուԹիւն և խաղաղուԹիւն, խաղաղ են նաև մահմէդականները։

—

Ի նկատի ունենալով այն երևելի դէպքերը, որոնք տեղի ունեցան վերջին ժամանակներում Արևելեան Բումիլիայում, որի կենտրոնատեղին և մայրաքաղաքը Փիլիպպօպօլն է, աւելորդ չենք համարում հաղորդել մեր ընԹերցողներին այդ քաղաքի մասին մի քանի հետաքրքիր և հանգամանօրէն տեղեկուԹիւններ։ Փիլիպպօպօլը գտնվում է բլուրների վերայ և ունի լաւ նկարչական տեսարան, մանաւանդ հեռուից։ Բլուրների մէկի վերայ կանգնեցած է մի արձան, ի պատիւ վերջին պատերազմում սպանուած ռուս զինուորների, իսկ միւսի վերայ ուղղափառների մայր եկեղեցին։ Մարիցա գետը բաժանում է քաղաքը երկու մասերի. կամուրջի մօտ գտնվում է [illegible] մի հին ընուԹիւն, շրջապատած պարիսպով։ Ներքուստ քաղաքը այնքան գրաւիչ չէ. փողոցները նեղ են, անկանոն և ունին վատ քարայատակ, բացի մի փողոցից, որը շինուեցաւ պատերազմից յետոյ երկաԹուղու կայարանից մինչև քաղաքի միջնաւայրը։ Քաղաքը հարուստ է գեղեցիկ Ճեմելիքներով, բայց ժողովուրդը աւելի սիրում է զբօսնել քաղաքային փոքրիկ այգիում, ուր ազնուական քաղաքացիները խմում են vischnap (բալի օշարակ զինուորական անասելոյծ նուագածուԹեան ազդեցուԹեան ներքոյ։ Փիլիպպօպօլում կայ երկու [illegible]-բ, սլավոնական և զինուորական։ Այն տեղ ռուսաց գաղԹականները շատ են։ Շուկան շատ օրինակելի կերպով է շինած, նման է գէլէրէյի կամ պոռծէ։ Վաճառականները արևելեան ձևով են նստած (ծալապատիկ), ունենալով բերներում ծխաքարշ կամ գլանակ։ Քաղաքում ամենալաւ տները—ուսումնարաններն են։ Ազգի է ընկնում նաև ուղղափառների կաԹոլիկէ մայր եկեղեցին վայտեայ քանդակներով զարդարած։ Գաւառի ընդհանուր-նահանգապետը լաւ ռոճիկ է ստանում։ Ջը նայելով, որ [illegible] պահպանուԹեան ծախսը հոգում էր տէրուԹիւնը, Գաբրիէլփաշան ստանում էր 150,000 Ֆրանկ, չը հաշուելով 24,000 Ֆրանկ Ճանապարհածախսը, որը գործ էր ածում նա միայն Կ. Պօլիս գնալ գալու վերայ։ Բումիլիական բանակը գտնվում է Մարից գետի ափերում։

—

Կ. Պօլսոյ „Times“ լրագրի Թղթակիցը լուր է հաղորդում, որ անգլիական մի միջերկրեայ ծովային նաւ շուտ ժամանակում կը ժամանէ Մալտից դէպի Թրքական ջրերը։ Ասում են, որ Բեզիկի ծովածոցը հասել է արդէն մի անգլիական ռազմանաւ։

—

«Politik» լրագրին գրում են Պետերբուրգից, որ այստեղի ազդեցուցիչ շրջաններում համարեայ Թէ համոզուած են, որ Գաբրիէլ-փաշան գիտէը յառաջիկայ յեղափոխուԹեան մասին։ Կ. Պօլսում և Լօնդոնում գիտէին, որ Ռուսիան չէ ցանկանում Բուլղարիոյ և Արևելեան Բումիլիայի միաԹիւնը Բատտենբերգի իշխանի կառավարչուԹեան ներքոյ։ Ցառաջիկայ դիպլօմատիկական բանակցուԹիւնների ժամանակ, Ռուսիան խստուԹեամբ կը պահպանէ Բերլինի դաշնագրուԹեան կանոնները։ Սակայն ամեն տեղ համոզուած են, որ այս դէպքերը պետուԹիւնների բարեկամական յարաբերուԹիւնից աւելի ուժեղ հեռևան։ ԵԹէ գործերը, ասում է Թղթակիցը, խստ ընԹացք ընդունեն այն ժամանակ Ռուսիան և Աւստրիան իրենց մի վորձ, որին ձեռք բերին նրանք այս վերջին պատերազմի ժամանակ կը ներգործեն միասին։ Ռուսիան Աւստրիայի հետ այսպիսի միասին գործելուն աւելի մեծ նշանակուԹիւն է տալիս, քան Թէ Բերլինի կողմից տուած օգնուԹեանը։ Ռուսիոյ յարաբերուԹիւնները դէպի Սերբիան պարզ են։ Ռուսիան քաջ հաճոյուած է, որ Աւստրիան այնպիսի մի տեղիք չի տալ Սերբիային, որը կարող լինի անբաւականուԹիւն յարուցանել Սերբիոյ և Բուլղարիայի մէջ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հռոմում հետաքրքիր ողբերգական անցք է պատահել, որ շատ յուզել է տեղացի բնակիչներին։ Երիտասարդ հոմէոպատ (բժիշկ) Պելադանը սխալմամբ տուեց մի կնոջ, լուծողական դեղի տեղ, «բլինիին»։ Հիւանդը ածեց բերանը մի ումպ սպիտակ փոշուց, բայց նրան շատ դառն գտնելով կանգնեցաւ։ Այն ժամանակ բժիշկն ասաց նրան՝ «Մի վախիր, այս փոշին ձեզ միայն օգուտ կը բերէ»։ Իւր խօսքերը հաստատելու համար, նա ինքը կուլ տուեց սրոշեալ քանակուԹիւնը։ Տիկինը չնորհակալուԹիւն յայտնեց և հեռացաւ, բայց հասնելով մինչև իւր Թաղ տունը խիստ գլխացաւ զգաց և ուշաբնկաւ։ „Մօտիկ բնակող բժիշկը օգնուԹեան հասաւ և կարողացաւ նրան մահից ազատել, իւր ժամանակին տալով փսխեցնող տեղ, իսկ բժիշկ Պելադանին գտան առանձնասենեակում մեռած։ Սարսափելի Թոյնը սպանեց նրան։

***

Ջեմս Մարշալլ։ Ամերիկական „The Engineering and Mining Journal“ լրագրում տպուած է հետևեալ նկատողուԹիւնը. „յուլիսի 23-ին մեռաւ Կելսում, անբաւատուԹեան և չքաւորուԹեան մէջ 74 տարեկան հասակում Ջեմս Մարշալլը, որը առաջին անգամ գտաւ Կալիֆորնիոյ ոսկէ հանքը։ Նա այդ հանքը գտաւ 1854 Թ., որը մինչև այսօր օգուտ է բերել մօտ 1,600,000,000 դօլլար։ Ջը նայելով դրան, Մարշալլը միշտ նեղվում էր յունվարի վերջը, որ օրում նա ջրաղացի ալիքի տականքում գտաւ մի վայլուն հատիկ և այդ գիւտով նա շտապեց իւր ընկերակից գեներալ Սուտտերի մօտ։ Նրա այս գիւտը պատճառ եղաւ նրա դժբաղտուԹեանը։ Աշխարհի ամեն կողմից Թափուեցաւ Կալիֆորնիա Ճանապարհորդները, վռնդեցին Ջեմսին իւր քրտինքով ձեռք բերած կալուածից և առանց այլևայլուԹեան տիրապետեցին նրա գոյքը և տունու տեղը։ Բազցած հանքահատները մոլեԹեցին նրա բոլոր եղջերաւոր անասուններին և կարծելով, Թէ այսպիսի երեւելի գիւտ անողը պէտք է անկասկած մի կախարդ լինի ուստի սկսեցին խեղՃին ինչպէս որսան շներ ամեն տեղ հետևել, չը տալ նրան հանգստուԹիւն և քաղցած գայլերի պէս բազդախնդիրները յափշտակում էին նրա նոր գտած հանքերը և կարողուԹիւնը։ Վերջապէս Կալիֆորնիոյ այդ բարերարը, ենԹարկուելով միշտ հալածանքների և ԹշուառուԹիւնների, մեռաւ ամենաչքաւոր գրուԹեան մէջ, չնորհիւ նրա գտած ոսկէ հանքերի մէկիսն ուներոց անձինքների։ Սրանից մի քանի տարի առաջ կառավարուԹիւնը նշանակից նրան 200 դօլլար ռոճիկ։ Այդ գումարը նա ստացաւ միայն երկու տարի, իսկ այնուհետև այդ ևս կարՃուեցաւ, այնպէս որ ամեն կողմից մնալով Ջեմսը զուրկ, կնքեց իւր մահկանացուն, ինչպէս վերն ասացինք ամենաՀաւատուր դրուԹեան մէջ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4 Հոկտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կամաւոր նաւատորմիղին վճռուեցաւ ունենալ

գծեր Սղեսսալի, Սպանիալի և Բրագիլիալի մէջ։

«Journal de St.-Pétersbourg» լրագիրը ասում է, որ եթէ գեսպանների միախոսմբ ազդեցութիւնը որը միաձայն դատապարտում է բուլղարիա-րումելիական կառավարիչների գաշնագրութեան կանոնների խանգարումը և նրանց գործունէութիւնը, կարող չի լինիլ համոզել վերջիններին, այն ժամանակ նոր ժողովը, որը կունենայ գեսպանաժողովից աւելի հանդիսաւոր գիրք և ձև, կ'գտնի այնպիսի միջոցներ, որոնք կարող կը լինեն գործերի գրութիւնը կանոնաւորելու։ Ցոյց տալով յոյների, սերբերի և բուլղարների շարժումի վերայ, լրագիրը յարակցում է, որ ժամանակ է վերջապէս դադարեցնել այդ տեսակ մտքերի մոլորութիւնները, եթէ ոչ, հակառակ դէպքում, գործը կը հասնի եղբայրապանութեան այն ազգերի մէջ, որոնց ազատութեան համար ոչ ոք այնքան չ'աշխատեց որքան Ռուսիան։ Յետ այնորիկ, խօսելով Կարավելովի առաջարկութիւնների մասին այն է թէ՝ նախ և առաջ բուլղարները պիտի 'ինկատի ունենան իրանց սեփական շահերը։ «Journal de St.-Pétersbourg»-ասում է. Մենք այդ մրցքի իսկութիւնը չենք հերքում, ինքնասիրութիւն հարկաւոր է, ինչպէս պետական անձինքներին, նոյնպէս և պետութիւններին. նկատենք միայն, որ եթէ Ռուսիան էլ այդ գիրքը ընդունէր, այն ժամանակ Կարավելովի հայրենիքը մի այլ վիճակի կ'ենթարկուէր։ Սակայն նա բացի սեպտեմբերի 16-ի յեղափոխութեան շահերից պիտի պաշտպանէ և ուրիշ շահեր։

ՎԻԵՆՆԱ. Մեծամեծների ժողովում վիճաբանութիւնների ժամանակ, վերաբերեալ գահական ճառի պատասխանին, նախագահ մինիստր Տաաֆէն պատասխանեց օպպօզիցիալի յարձակմունքներին՝ որը մեղադրում է նրան այն բանի մէջ, որ իբր թէ նա աւելի համակրում է կայսերութեան միւս ազգութիւններին քան թէ գերմանացիներին։ Նա յայտնեց, որ կառավարութիւնը աշխատում է բոլոր ազգութիւնների յառաջադիմութեան համար, ցանկալով միևնոյն ժամանակ պահպանել և կայսերութեան միութիւնը և զօրութիւնը։ Իսկ ինչ վերաբերում է գերմանական լեզուին, այդ դէպքում կառավարութիւնը նայում է գործնական տեսակէտից և յայտնի սահմանից դուրս չի գալ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Եբէ ամսական տրամաբժէքը։

4 Հոկտեմբերի

Լօնդօն $23^{19}/_{32}$, $23^{11}/_{16}$ և $23^{5}/_{8}$
Համբուրգ $200^{1}/_{2}$ և $201^{1}/_{4}$ $200^{3}/_{4}$
Պարիզ $248^{7}/_{8}$, $249^{3}/_{4}$ և 249
Պօլուիմպերիալ 8 ր. 36 կ. սակ.
Մաքս. կուպոն. 8 ր. 29 կ. սակ.
Արծաթ . . . 1 ր. 30 կ. սակ.
Բօրսային գին. $5^{1}/_{4}$ և $6^{1}/_{4}$ %
Պետակ. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 100 ր. 12 կ. սակ.
2-րդ » . 98 ր. 62 կ. սակ.
3-րդ » . $98^{3}/_{4}$ ր. — կ. գն.
4-րդ » . 98 ր. 62 կ. սակ.
5-րդ » . 98 ր. 62 կ. սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի 96 ր. 37 » սակ
2-րդ » . 96 ր. 37 » սակ.
3-րդ » . $96^{1}/_{2}$ ր. — կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . 221 ր. » սակ.
» » 2-րդ 208 ր. » սակ.
$5^{1}/_{2}$% բենտեր $102^{1}/_{2}$ ր. » սակ.
Ոսկէ բենտը . $176^{3}/_{4}$ ր. » սակ.
Նոր կոնսոլ փոխ. $148^{1}/_{4}$ ր. կ. սակ.

5 Հոկտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հրատարակուած է կառավարչական կարգադրութիւն, որով յայտնվում է թէ, այն անձինք, որոնց կրծքի շրջապատը պակաս է $^{1}/_{8}$, $^{2}/_{8}$ կամ մինչև անգամ $^{3}/_{8}$ վերշոկից և որոնք ունեն 2 արշին և 5 վերշոկ հասակի բարձրութիւն, այդպիսիներին ծառայութեան մէջ ընդունելութեանը արգելք չը կայ, նա մանաւանդ եթէ իրանք առողջ կազմուածքի տէր են, ունեն զարգացած մկանունքներ և ներքին գործարանների կանոնաւոր զարգացումն։

Լրագիրները հաղորդում են, որ 1886 թ. Արևելեան Սիբիրիայում կը մացնուի Արևմտեան Սիբիրիայի անցեալ տարուայ սահմանուած կանոնագրութիւնը, նախկին արքունական գիւղացիների կառավարութեան մասին։

Տագանրոգի մաքսատան գեղծումների գործը քննութեան կ'ենթարկուի Սենատի դեպարտամենտում Հոկտեմբերի 15-ին։ Ասում են, որ Միրօնովիչի վճռի դէմ պրօկուրորը բողոք պիտի տայ։

Կ. ՊՕԼԻՍ։ Պետութիւնների վըճռում, որի մէջ ծրարած է դեսպանախորդի միախոսմբ ծանուցագիրը, և պատասխանը վերաբերեալ այն խնդրին, որով Բ. Դուռը դիմել է պետութիւններին, ասուած է. «Համաձայն Ռուսիայի առաջարկութեան, դեսպանները ժողովուեցան պաշտպանելու խաղաղութեան և արիւնահեղութեան յառաջն առնելու, մինչև պետութիւնների մի համապատասխան միջոց գտնելը»։ Յետ այնորիկ վճիռը գովում է սուլթանի գործունէութիւնը, որը ձգտում է պաշտպանել իւր բարձրագոյն իրաւունքները։ Դեսպանները յոյս ունեն, որ սուլթանը այսուհետև ևս կը պաշտպանէ իւր խաղաղ ձգտումները, որից յետոյ նրբանք պախարակում են Րումելիայի մէջ պատահած դէպքերը և մեղադրում են նրանց առաջնորդներին։ Դեսպանները առաջարկում են Բուլղարներին զօրք չը տանել դէպի սահմանագլուխ, դադարեցնել զինաւորութիւը, կարգ պաշտպանել, և չը յուսալ թէ նրանց կ'օգնեն պետութիւնները։ Այս վճիռը ուղարկուած է Կ.-Պօլիս և Սօֆիա։ Սօֆիայում գտնուած պետութիւնների դիպլօմատիքական ներկայացուցիչները այս վճիռը յանձնեցին Կարավելովին, յարակցելով, որ թող Բուլղարները յետ դառնան իրենց անխոհեմ վարմունքից և վերջ տան զինաորագրութեան։ Բ. Դրան վերայ այդ վճիռը հաճելի ներգործութիւն ունեցաւ պետութիւններին պատասխան տալու համար, սուլթանը մինիստրների արտաքոյ կարգի նիստ կայացրեց։

ԿՐՕՆՇՏԱԴ. Ծովային մինիստրութեան կառավարիչը «Витязь» նաւով ուղևորուեցաւ Կօպենհագէնից վերադառնող „Держава“ նաւին դիմաւորելու։

ԿՕՊԻՆՀԱԳԷՆ. Իշխան Վօլդեմարը վաղը կը գնայ Փարիզ, ուր կը կայանայ նրա ամուսնութիւնը Շարտր Հերցոգի դստեր հետ, իսկ կիւրակի գնում են այնտեղ Դանմարքի թագուհին և թագաժառանգը իւր ամուսնով։

ՆԻՇ. Այն լուրերը, իբր թէ Սերբիական զօրքերը մուաք են գործել Բուլղարիա հնարովի են։

6 Հոկտեմբերի

ՍՕՖԻԱ. Պետութիւնների դիպլօմատիքական ներկայացուցիչների միախոսմբ ժողովի ծանուցագրում, որը յանձնուեցաւ Բուլղարիայի կառավարութեանը, ասուած է, թէ պետութիւնները սուլթանի պահանջը, վերաբերեալ Արևելեան Րումելիայի աղմուկների վերջ տալուն հաւանութիւն ցոյց տուին և թէ պետութիւնները դատապարտում են գաշնագրութեան կանոնների խանգարումը, մեղադրում են այդ դէպքում այն անձինքներին, որոնք իրաւունք են բանեցնում Բալկանի երկու կողմերում և առաջարկում են բուլղարական առաջնորդներին չը կենդրոնացնել իրենց զօրքերը Րումելիայի սահմանագլխում, դադարեն զինաւորուելուց և յետ կանչեն իրանց անիմաստ ձեռնարկութիւնից, որովհետև նրանց օգնող չը կայ։ Բուլղարիան համաձայնեցաւ պետութիւնների այս առաջարկութեանը և վճռեց յետ կանչել Արևելեան Րումելիայից զօրքի մեծ մասը, թողնելով այնտեղ միայն սակաւաթիւ բերդապահ զօրք։ Բուլղարիան ուղարկել է Սերբիային մի ծանուցագիր, որով բողոքում է Սերբիայի էմիսարների Բուլղարիայի և Սերբիայի սահմանակից նահանգներում գործած անկարգութիւնների դէմ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՑԵՐԵԿՈՒԱՑ ԵՒ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտներ պատրաստելու բոլոր ուսումնարանների I դասատան համար։ Գինը չափաւոր է։ Կուկի, Անդրէևսկայա փողոց № 13.

5—3

Լոյս տեսան Ֆ. Շմիդթի ԲԻՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ Երկրորդ տիպ.։ (Գինն է 40 կօպ.)

—

ԳԷՕՐԳ ՎԱՇԻՆԳԹՕՆ Երկրորդ տիպ. (Գինն է 60 կոպ.)

Թարգ. գերմ. Փ. Վարդանեան.

Վաճառվում են Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

ՇՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 2342.) 48—35

Eau de Cologne des tuileries
De RIGAUD et C-o
Rue Vivienne, 8, PARIS
Ο ՏՐ ԿՕԼՕՑՆ ՏԷ ԹԻԻԼԻՔՐԻ
Ռիգօ և ընկերութեան
Վիվիէն փողոց № 8
ՓԱՐԻԶ

Տարաշխարհիկ և հազուագիւտ անուշահոտ ծաղիկներով պատրաստուած այս Օ սը Կօլօյնը ամէն վափկասուն կանանց և օրիորդաց միակ գործածանն է այսօր։ Ընտիր, քաղցրաբոյր, ախորժելի և տևական հոտ մը ունի, այս պատճառաւ է որ վափկամորթ և նազելի կանայք և օրիորդք գործ են ածում նրան Թէ դաշկինակի վերայ և Թէ լուացուելու համար։

Ծախվում է Թիֆլիս Կովկասեան դեղագործական ընկերութեան կեդրոնատեղին։ Т

(ամ. 3) 9—9

ԴԵՐԶԱԿ ԳԵՐՄԱՆ

Իշխան Իվան Մուխրանսկու տանը, Գոլովինսկիյ պրօսպեկտի վերայ, կլասիկական գիմնազիօնի կողմից.

Ստանալով ամեռուայ սեզօնի համար ԱՆԳԼԻԱԿԱՆ և ՖՐԱՆՍԻԱԿԱՆ գործարանների ապրանքները, ընդունում եմ պատուէրները քաղաքացիական և զինուորական հագուստների. նոյնպէս ընդունում եմ պատուէրներ գիմնազիստների և բոլոր ուսումնարանների աշակերտների ամեռուայ համազգեստները կարելու—ԻՎԱՆ ԴՆԵՐՈՎ։

10—8

ՊԵՊՏՈՆՆԵԱՆ ՍՆՆԴԱՐԱՐ ՇՈԿՈԼԱԴ
Ֆարմացիալի մագիստրոս
Ա. Լ. Ֆոն Ք
Բժշկական դեպարտամենտի Թոյլատու. Թեամբ
Ախտաբեր գործոց մինիստրութեան, Գրըխաւոր պահեստը ՇՏՈԿՄԱՆ և ԼԵՄԱՆ գերազահագործոցում։ Մոսկվայում Լիլինա։ Գործ է ածվում ստամոքսի կատարքի դէմ



Об разрѣш. Медицинск. Департамента
Министерства Внутренних дѣлъ.
ГЛАВНЫЙ СКЛАДЪ ВЪ АПТЕК. МАГАЗ.
ШТОКМАНЪ и ЛЕМАНЪ.
МОСКВА, ЖИВОДЕРКА.

Пріятнаго вкуса, полезенъ дѣтямъ и взрослымъ, ОСОБЕННО МАЛОКРОВНЫМЪ, какъ увеличивающій питаніе.
Продается во всѣхъ кондитерскихъ, гастрономическихъ, аптекарскихъ магаз. и аптекахъ.
Цѣна коп. въ 20 плит. 1 р. 20 к. $^{1}/_{2}$ коп. 70 к.
Перес. коп. 40 к., 2 коп. 60 к. и т. д.

Ախորժելի է, օգտակար է երեխայց և հասակաւորների համար, մանաւանդ ա. բնակատներին, իբրև սնուցիչ ամէն տղոց նեխի ծննդականների համար և մանր հիւանդութիւնների դէմ։

Վաճառվում է բոլոր քաղցրավաճառանոցներում, դասաբնակ. քական, դեղավաճառական խանութներում։

Աբիկիկի գինն է (20 կոպ.) 1 ր. 20 կ., $^{1}/_{2}$ աբիկիկը 70 կ։ Ասքման գինը մի աբիկի 40 կոպ., երկու աբիկի 60 կոպ. և այլն։

(Ц.) 50—35

Երկու օրիորդ, որք ասարել են ուսման ընթացքը Թիֆլիսու օրիորդաց Գիմնազիայում, կամին ընդունել իրանց մօտ աշակերտք և աշակերտուհիք պատրաստելու մտանել զանազան ուսումնարանները և պատրաստ են գնալ տներում պատրաստելու բոլոր առարկաներով։

Հասցէն, Գանովսկի փողոց Շահնազարեանի տուն, № 15.

3—2

Անդրկովկասեան երկաթուղին։
ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒՈՐԻՆԸ „ԹԻՖԼԻՍԻ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաթում պոստ. գնում է ժ. 8—35 րոպ. առ.
Բաթումից „ գալիս է „ 10—25 „ գիշ.
Բագու . . . գնում է „ 10—55 „ գիշ.
Բագուից „ „ . . . գալիս է „ 8—„ „ ցեր

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐՄԱՄԻ ՄԷՋ.

Թիֆլիսից ապր.—Ճանապ. գնաց. գնում է . . . . . ժ. 3—15 „ առ
Սուրամից գալիս է . „ 8—4 „ ա

Վլադիկաւկազեան պօստային
ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒՈՐԻՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք Ճանապարհին զնչերելու կայարանները ունին։
Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. Ա.
Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ

„ԲՕՐՄԱՆԻ“ ՒԱԼԶԱՄ

Թոյլ է տրուած բժշկական խորհրդից, և գործ է դրվում դրբսից ոսկրային (բեվմատիզմի) ցաւերի դէմ։ Գլխաւոր պահեստը Պետերբուրգում. Բայլշայա-Կանիւշէննայա № 14—22, Թիֆլիս և Բագու. դեղագործական առևտուրի Կովկասեան ընկերութեան մէջ։ 32—7

ԳԱՍՏՐՈՆՈՄԻԿԱԿԱՆ ԲԵՍՏՕՐԱՆ

Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ Մաւխրանսկիի տանը քաղաքային կլուբի տակ բացուած է բեսթօրան-ճաշարան։ Կերակուրները միշտ ԹԱՐՄ և ԽՆԱՄՔՈՎ պատրաստուած և շատ ԶԵՒՆՏՈՒ ԳՆԵՐՈՎ, նոյնպէս ԸՆՏԻՐ ԻՆԻՆԵՐ տեղական, Կախէթի և եւրոպական։ Բիֆշտէք, ջամա, նաբուխ, ջօվնա հիւրերի համար։ Կէսօրուան ժամը 1-ից մինչև 5-ը ճաշ երեք կարգի. ա) երկու տեսակ կերակուր, մի փոքրիկ բաժակ օղի, կէս շիշ գինի և մէկ թաս կօֆէ. գինն է՝ 55 կ.։ բ) երեք տեսակ կերակուր, կէս շիշ գինի և մէկ թաս կօֆէ. գինն է 75 կ.։ գ) Զորս տեսակ կերակուրով, օղի, գինի գինն է՝ 85 կ.։

Կերակուրները կարելի է ստանալ և ՊՕՐՏԻՕՆՆԵՐՈՎ։

Յարգելի հիւրերի պատուէրներին միշտ պատրաստ է գոհացումն տալու։ 15—10 ԴԻԴ-ՋՕՐԱԲ

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Октября 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр. д. № 12.